ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Նվիրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին

№ 16

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

Посвящается 50-летию основания факультета востоковедения ЕГУ

№ 16

Ереван
Издательство ЕГУ
2019

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES

Dedicated to the 50th anniversary of the foundation of the faculty of Oriental Studies of YSU

№ 16

YEREVAN
YSU PRESS
2019

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Դավիթ Հովհաննիսյան
8-9-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ 9-22

Վահե Հակոբյան
ԻՍԹԻՀՍԱՆԸ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ 23-34

Ռուբեն Միրաքյան,Հարություն Մաթևոսյան
ՈՒՍԱՄԱ ԲԵՆ ԼԱԴԵՆԻ ԿՈՂՄԻՑ ՋԻՀԱԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ԸՆԴԴԵՄ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ 35-47

Անդրանիկ Հարությունյան
«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՇՈՒՐՋ 48-60

Թյուրքագիտություն

Ավետիք Հարությունյան
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 61-75

Հայկ Դարբինյան
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 76-87

Մարիամ Մելքոնյան
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆԵՋԱԹԻ ԵՎ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆ 88-96

Արթուր Միրզոյան
ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 97-108

Տաթևիկ Սարգսյան
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (SOCAR) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 109-119

Սամվել Ռամազյան
«ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 120-152

Իրանագիտություն

Արտյոմ Տոնոյան
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ (ԹԱԹԵՐԵՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ. 153-160

Լիանա Պետրոսյան
ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀՄՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2009 ԹԹ.) 161-171

Շուշաննա Գալստյան
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱ-ԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՓՈՐՁԸ ԲԱՀՐԵՅՆ 172-180

Աննա Գևորգյան
«ՄԱՐՋԱՅԵ ԹԱՂԼԻԴԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ՇԻԱՅԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ 181-191

Հասմիկ Բիանջյան
ԽԱՂԱՆԻԻ ՊՈԵՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ 192-198

Հովհաննես Խորիկյան
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XX ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 199-209

Անի Նահապետյան
ԱՌԱՋԻՆ ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ 210-223

***

Ամալյա Գրիգորյան
ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԻՐԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿ. ԱՌԱՍՊԵ՞Լ, ԹԵ՞ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 224-229

Տիգրան Գրիգորյան
«ՃԱՆԿՈՂ ԱՐԾԻՎԸ» ԵՎ «ԵՐԿՆԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ 230-247

CONTENT

Arabic Studies

Davit Hovhannisyan
ARAB WORKS OF THE 8-9TH CENTURIES AS A SOURCE FOR THE STUDY OF ADAPTATION PROCESSES 9-22

Vahe Hakobyan
ISTIHSAN IN SUNNI MAZHABS AND ITS ADAPTATION 23-34

Ruben Mirakyan, Harutyun Matevosyan
THE DECLARATION OF JIHAD AGAINST AMERICANS BY OSAMA BIN LADEN 35-47

Andranik Harutyunyan
THE TRANSFORMATION OF THE FOREIGN POLICY OF THE STATE OF QATAR IN THE THREE SEA SYSTEM 48-60

Turkic Studies

Avetik Harutyunyan
THE ROLE OF MILITARY IN FOREIGN POLICY DECISION MAKING IN TURKEY IN 1990's 61-75

Hayk Darbinyan
THE PERCEPTION OF DIPLOMACY BY OTTOMANS AND ITS PRACTICE IN THE CONTEXT OF EXTERNAL WORLD 76-87

Mariam Melkonyan
REFLECTION OF GENDER CONTRADICTIONS IN DIVAN LITERATURE: NEJATI AND MIHRI HATUN 88-96

Arthur Mirzoyan
COMPARATIVE ANALYSIS OF CONTEMPORARY ARMENIAN AND AZERBAIJANI POETRY 97-108

Tatevik Sargsyan
THE ACTIVITIES OF STATE OIL COMPANY OF AZERBAIJAN (SOCAR) IN GEORGIA 109-119

Samvel Ramazyan
THE QUESTIONS OF STUDYING OF THE HISTORISM OF

THE EPIC OF “KOROGLU” AND THE ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE XVIII CENTURY 120-152

Iranian Studies

Artyom Tonoyan
ON SOME METHODOLOGICAL FEATURES IN UNIVERSITY TEACHING OF CAUCASIAN PERSIAN (TAT) LANGUAGE 153-160

Liana Petrosyan
THE SOCIO-POLITICAL SITUATION IN IRAN UNDER THE FIRST PRESIDENTAL TERM OF MAHMOUD AHMADINEJAD (2005-2009) 161-171

Shushanna Galstyan
THE EXPERIENCE OF EXPORTING THE IDEOLOGY OF THE IRANIAN ISLAMIC REVOLUTION TO BAHRAIN 172-180

Anna Gevorgyan
THE INSTITUTE OF “MARJAYE TAQLID” AS A CORE FACTOR OF THA SHIA NETWORK 181-191

Hasmik Bianjyan
ABOUT KHAQANI SHIRVANI’S POETRY 192-198

Hovhannes Khorikyan
ON THE LOCATION OF THE XX SATRAPY OF ACHAEMENID PERSIA 199-209

Ani Nahapetyan
THE FIRST ACHAEMENIDS AND MAGIS 210-223

***

Amalya Grigoryan
KING SOLOMON AS A REAL AUTHOR OF THE SONG OF SONGS: MYTH OR TRUTH? 224-229

Tigran Grigoryan
THE SYMBOLS OF "CLAWING EAGLES" AND "HEAVENLY KINGDOMS" IN THE ART OF CHRISTIAN EAST 230-247

Մարիամ Մելքոնյան[1]

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ԴԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆԵՋԱԹԻ ԵՎ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆ

Բանալի բառեր՝ *գենդերային հակասություն, արքունական պոեզիա, Նեջաթի, Միհրի Հաթուն, նազիրե, քննադատություն*

Օսմանյան պետությունում քաղաքակրթական և մշակութային փոփոխությունների, իսլամի ընդունման, տոհմատիրական, ընտանեկան կյանքի ազդեցությամբ հասարակության մեջ կնոջ տեղն ու կարևորությունն էականորեն փոխվել է: Արևելագետներ Վ. Էնդրյուսն ու Մ. Քալփաքլըն իրենց համատեղ աշխատության մեջ այս երևույթը նկարագրելիս համեմատություններ են անցկացնում օսմանյան և եվրոպական՝ մասնավորապես վաղ-մոդեռնիստական անգլիական հասարակության միջև: Մանավորապես՝ նշվում է, որ այս շրջանում ինչպես ողջ Եվրոպայում, այնպես էլ Օսմանյան կայսրությունում միջնադարյան ավանդույթը կառուցված էր անտիկ հիմքերի վրա, այն շաղախված էր կնատյացությամբ և այդ հիմքը թե՛ կրոնական և, թե՛ «գիտական» առումով ամուր արմատներ էր ստեղծում կնոջ ստորադաս կարգավիճակի համար[2]: Թուրք պատմաբան Ֆ. Սումերը գրում է, որ մինչ Օսմանյան պետությունը կդառնար մեծ կայսրություն, կինը տղամարդու աչքում ունեցած իր արժեքն ու հարգանքը կորցնելով՝ աստիճանաբար հասարակական կյանքից մեկուսացվեց, փակվեց տանն ու վանդակում: Նրա պնդմամբ

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի հեռակա ասպիրանտ, էլ. փոստ՝ mariam.melkonyan@ysu.am

[2] Andrews W., Kalpaklı M., The Age of Beloveds. Love And the Beloved in Early–Modern Ottoman and European Culture and Society, Durham and London, Duke University Press, 2005, p. 193.

Ստամբուլի նվաճումից հետո հասարակության մեջ կինն ամբողջությամբ կորցրեց իր ունեցած տեղը[3]:

Ինչպես գրում է թուրքագետ Ալ. Սաֆարյանը, Օսմանյան կայսրությունում կանանց մեկուսացրին հասարակությունից՝ ծածկելով չարշաֆով և փակելով տանը[4]: Հասարակության մեջ կնոջ հիմնական արժանիքը սկսեց դիտարկվել հենց ինքնաքողարկումը կամ մեկուսացումը: Այս ընկալումը տարածում գտավ նաև գրականության մեջ: Օսմանյան պալատական պոեզիայում երկար ժամանակ կինը եղել է սիմվոլ, ինչի շուրջ ձևավորվել և զարգացել է սիրային թեմատիկան՝ իր տարբեր դրսևորումներով: Հենց այս պատճառով դժվարությամբ գրականություն մուտք գործած և որոշակի դիրքի հասած կին գրողների ներկայացրած պրոբլեմատիկան համարվում է երկակի: Մի կողմից կինը ստեղծագործելով իրեն դարձնում է տեսանելի և լսելի հասարակական որոշակի շրջանակի համար, այլ կերպ ասած նա ազատվում է իրեն պարտադրված քողից և ի ցույց է դնում իր իրական արժեքը: Մյուս կողմից, այս կանայք, հատկապես հանդես գալով սիրային թեմատիկայի շրջանակներում, հայտնվում են ոչ թե հեռավոր կամ հաճախ բացակա սիրեցյալի, այլ հենց տառապող սիրահարի դերում[5]:

Ուշագրավ են դիվանի պոեզիայի այն ժանրերն ու ժանրային ձևերը, որոնց շրջանակներում ստեղծագործել էին նաև կանայք, քանի որ դրանք, ըստ էության, դիվանի գրականության կարծրացած ձևերի ու կանոնների խտացումն էին:

[3] Sümer F., Osmanlılarda Kadın ve Aile Hayatı, Resimli Tarih Mecmuası, Sayı: 67, Temmuz 1955, s. 3934, Çetinkaya Ü., Divan edebiyatında kadına genel bakış, Turkish Studies International Periodical For the Languages, Literature and History of Turkish or TurkicVolume 3/4 Summer 2008, p. 280. http://turkoloji.cu.edu.tr/ESKI%20 TURK%20%20EDEBIYATI/ulku_cetinkaya_divan_edebiyatinda_kadina_genel_bakis.pdf

[4] Safaryan Al., On The History of Turkish Feminism, Iran and the Caucasus, Vol.11.1, Brill, Leiden-Boston, 2007, p. 141.

[5] Andrews W., Kalpaklı M., ibid, p. 196.

Ստեղծագործական անկախության բացակայությունը կապվում է նաև ընդհանուր հասարակական հոգեբանության հետ, որտեղ կնոջ ամենամեծ առավելությունը համարվում էր ոչ թե ինքնարտահայտվելու կարողությունը, այլ հենց հակառակը: Անգամ պոեզիայում կինը պիտի զգուշանար իր սիրո, հույսի, ցավի կամ այլ զգացմունքների մասին խոսելուց, որպեսզի իր շրջապատում վատ ընդունելության կամ վերաբերմունքի չարժանանար:

Այնուհանդերձ, օսմանյան արքունական պոեզիան ունեցել է նաև գաղափարական առումով ինչ-որ չափով անկախ կին գրողներ, ովքեր համարձակվել են անուղղակի, երբեմն նաև ուղղակի բողոք ներկայացնել հնացած ավանդույթների և սովորույթների դեմ, փորձել են պաշտպանել են կնոջ իրավունքներն ու խոսել վերջինիս արժանիքների մասին: Ասվածի վառ ապացույցն են բանաստեղծուհի Միհրի Հաթունի (1456-1514 թթ.) ստեղծագործությունները: Վերջինս սերունդներին թողել է քնարական ստեղծագործությունների մի ժողովածու, որում փորձել է պաշտպանել կնոջ անձնական ազատության իրավունքը, երգել է երկրային սիրո մասին: Բանաստեղծուհու քայլերը հաճախ չեն համընկել հասարակության մեջ գերիշխող կարծիքին՝ իր դեմ դուրս հանելով հատկապես հոգևորականությանը և արքունական գրողներից շատերին: Այդ են վկայում նրա դիվանում հանդիպող որոշակի տողեր, որոնք, ըստ էության, իրեն ուղղված քննադատությունների պատասխանն են.

Kadı müftî müderris-i zâhid u pîr u civân
Kangisî cân vîrmedî mahbub oğlan üstüne[6]

[6] Михри-Хатун. Диван, Критический текст и вступительная статья Е. И. Маштаковой, Москва, с. 34.

Քաղիներ, մուֆթիներ և իրավագետներ, ծերեր ու երիտասարդներ,
Նրանցից ո՞ր մեկը կյանքը չէր տա սիրեցյալ պատանու համար:

Միհրի Հաթունը թեև կարողացել է ժամանակի ընթացքում իր տեղը զբաղեցնել արքունական գրական մեջլիսում (խորհրդում), այնուհանդերձ, նա շրջապատված է եղել նաև հակառակորդներով ու թշնամիներով, ովքեր քննադատում էին բանաստեղծուհու համարձակությունն ու գրական գործունեությունը: Սա լավագույնս արտահայտված է նրա հետևյալ բեյթում.

Düşman güler bû hâlüme ben âğlârım müdâm
Hey bûna cânımı katılanûr âdamlar öldürür[7]

Թշնամին ծիծաղում է իմ այս վիճակի վրա, իսկ ես՝ շարունակ լաց եմ լինում,
Եվ ահա, միավորվելով այդ նպատակի համար, մարդիկ սպանում են իմ հոգին:

Եթե հաշվի առնենք այն փաստը, որ կին գրողները ձգտում էին ընդգրկվել պալատական պոետների շրջապատում կամ դառնալ որևէ գրական մեջլիսի անդամ, ջանում էին վերնախավի և ժամանակի ամենահայտնի ու հարգված պոետների կողմից իրենց ստեղծագործություններին և տաղանդին վերաբերող դրական գնահատականներ ու գովեստներ ստանալ, ապա բնականաբար նրանց մեծ մասը կգերադասեր հետևել սահմանված կանոններին՝ թեկուզ սեփական մտքերն ու գաղափարներն արտահայտելու հնարավորությունից զրկվելու գնով: Գրական աշխարհում ընդունվելու լավագույն տարբերակը ժամանակի ամենահայտնի

[7] Նույն տեղում, էջ 29:

գրողների ստեղծագործությունների կրկնօրինակումն էր՝ նազիրեի ժանրը և դրա գաղափարական, թեմատիկ հենքը: Դրա համար լավագույն հնարավորություն էին ընձեռում նազիրեները՝ բանաստեղծությունների կրկնօրինակումները կամ պատասխանները[8]:

Միհրին ևս հայտնվելով գրական շրջանակում՝ այլ պոետների նման փորձել է սեփական ստեղծագործություններն այդ միջավայրում ներկայացնել: Նա ամենահայտնի բանաստեղծուհին է, ով դիմել է կրկնօրինակման ժանրին՝ նազիրեին, և ազդված լինելով 16-րդ դարի ամենամեծ պոետներից մեկը համարվող Բայազիդ 2-րդ սուլթանի զրուցակից Նեջաթիի պոեզիայից, վերջինիս ուղղված նազիրեներ է գրել: Կենսագիր Լաթիֆին փաստում է, որ այդ նազիրեների նպատակը Նեջաթիի մակարդակին հասնելն էր[9]: Որքան էլ թուրք գրականագետ Դ. Հավլիօղլուն պնդում է, որ Միհրիի ստեղծագործություններն ինքնատիպ են և չեն կրկնում ժամանակի մյուս պոետների գործերը, բանաստեղծուհու գրական ժառանգության ամենահայտնի ուսումնասիրողներից Մ. Արսլանը, ով հրատարակել է նաև Միհրիի ստեղծագործությունների ամբողջական դիվանը[10], նշում է որ Նեջաթիի 55 բանաստեղծություն կրկնօրինակվել է Միհրիի կողմից[11]:

Բանաստեղծուհին կարողացել է վարպետորեն կրկնօրինակել Նեջաթիի գազելների բառերը, հանգերը, փոխանցելով նույն գաղափարը ոչ թե նախորդ գազելի սովորական կրկնօրինակման այլ դրան տրված պատասխանի տեսքով. Օրինակ.

---

[8] Bekiroğlu N., Osmanlıda Kadın Şairler, Ankara, 1999, s. 803.
[9] Tezkire-i Lâtifî, İkdam Matbaası, İstanbul, 1314 (1896), s. 178-179.
[10] Arslan M., Mihri Hatun Divanı, Amasya, 2007.
[11] Yavuz K., Türk Şiirinde Nazire, Divan Edebiyatı Araştırmaları Dergisi 10 İstanbul 2013, s. 398, http://devdergisi.com/Makaleler/1438896474_20%20Kemal%20Yavuz.pdf

Gözümde ʻaks-i cemâlüñ bahâra beñzetdüm
Yaşum bahârda ṭaşmış pınâra beñzetdüm
Ögerseñ ol ruḫıög kim Necâtî vaṣf ideli
Beyân varaḳlarını lâle-zâra beñzetdüm[12]

Իմ աչքերում գեղեցկուհու արտացոլանքը գարնան նմանեցրի,
Արցունքս գարնան վարարած աղբյուրի նմանեցրի,
Գովաբանիր այդ այտերը, իմաստու՛ն Նեջաթի,
Բացված թերթիկները վառ կակաչի նմանեցրի:

Նեջաթի

Nigâr ruḫlarını lâle-zâra beñzetdüm
Benefşe ṣaçlarını müşg-bâra beñzetdüm
Dilinde şâm u seḥer Mihrînüñ budur ẕikri
Vefâsı yoḳṣanemi rûzigâre beñzetdüm

Գեղեցիկ այտերը վառ կակաչի նմանեցրի,
Մանուշակագույն մազերը անուշաբույր խոպոպների նմանեցրի,
Գիշերն ու ցերեկը պատմող Միհրիի խելքը սա է,
Անհավատարիմ գեղեցկուհուն մի քամու նմանեցրի:

Միհրի Հաթուն

Նազիրեներում Միհրին նաև արտահայտել է իր հիացմունքը պոետի հանդեպ[13]: Այդ են վկայում նրա հետևյալ տողերը.

Mihrî Necâti şi'rine dersen nazirelik
Sen bir keda ü müflis o bir padişâhla[14]

[12] Hakverdioğlu M., Mihri Hatunu anlamak, Amasya Belediyesi Kültür Yayını, 2016, s. 277.
[13] Hakverdioğlu M., a. g. e., pp. 555-584.
[14] Михри-Хатун. Диван, с. 42.

Օ Միհրի՛, Նեջաթիի բանաստեղծություններին նազիրե ես գրում,
Մինչդեռ նրա պես փաղիշահի հետ համեմատած դու աղքատ և մուրացկան ես:

Հայտնի է, որ Նեջաթին խիստ վրդովվել է այդ փաստից, սկզբում արհամարհել է նազիրեները, բայց ի վերջո բանաստեղծուհուն տվել է կոպիտ պատասխան.

Ey benim şi'rime nazîre dîyen
Çıkma râh-î edebden eyle hazer
Deme kî işte vezn ü kâfiyede
Şi'rim oldu Necâtî'ye hemser
Harfi üç olmak île îkisinin
Bir midir filhakîka ayb ü hüner[15]

Էյ դու՛, իմ բանաստեղծություններին նազիրե գրող,
Տե՛ս, չանցնե՛ս պատշաճության սահմանները:
Չասե՛ս. «Ահա չափով և հանգով,
Իմ բանաստեղծությունները մոտ են Նեջաթիին»:
Թեև երկու բառում էլ երեք տառ կա,
Բայց մի՞թե «ամոթն» ու «տաղանդը» կարող են նույն իմաստն ունենալ:

Այս տողերում, թերևս, ընդհանրացված է կին գրողների նկատմամբ ժամանակի հայտնի պոետների կարծիքն ու վերաբերմունքը: Այսինքն ոչ միայն հասարակության, այլև մշակութային և հատկապես գրական միջավայրի

[15] Նույն տեղում, էջ 41:

ներկայացուցիչներից շատերը կանանց չեն ընդունել որպես հավասարի:

Այս թեմայի ուսումնասիրությամբ զբաղվող գրականագետների զգալի մասն առանձնացնում է Միհրիին՝ որպես օսմանյան գրականության մեջ կանանց ձայնն արտահայտող բանաստեղծուհու: Նա փորձել է պոեզիայի միջոցով խոսել ազատության մասին, և անգամ իր անձնական կյանքի օրինակով դարձել է ազատության ձգտող օսմանյան կնոջ կերպար: Միհրին հաստատում է, որ կնոջ համար իր արիությունը ցույց տալու լավագույն միջոցը պոեզիան է: Այս առումով տեղին է հիշել *«մշակութային անոմալիա*[16]*»* եզրույթը, որը Վ. Էնդրյուսն օգտագործում է կին գրողների համար: Ըստ նրա, այս երևույթը Միհրիի նման կանանց դարձնում է «հզոր և վտանգավոր»[17]: Միհրիին հաջողվել է հավասարվել իր ժամանակի հայտնի պոետներին և չնայած նրանցից ստացած խիստ քննադատություններին, բանաստեղծուհին անձամբ էլ իր գրական գործունեության մասին ունեցել է բարձր կարծիք: Դա երևում է նրա հետևյալ տողերում.

Bahr-i şiir içere Mihrî bir dûrdur
Ki ânî görmemiş evvelâ ğavvâs
Ma'nî dükkânî içinde sarrâf ol
Sende bûlsûn kamûsû kevher hâs
Vîrme nâdân elîne kîm ne bilûr
Âltınınkıymetinîehl-i resâs[18]

Միհրին մի մարգարիտ է պոեզիայի ծովում,
Այդպիսին դեռ չեն տեսել անգամ մարգարիտ որոնողները:

[16] Andrews W., Kalpaklı M., ibid, p. 163., p. 199.
[17] Михри-Хатун. Диван, с. 33.
[18] Նույն տեղում, էջ 38:

Դարձի՛ր սեղանավոր բանականության խանութում,
Որպեսզի բոլորը քո մեջ տեսնեն յուրահատուկ գոհարներ:
Մի՛ հանձնիր դրանք անգետի ձեռքը,
Քանզի ի՞նչ գիտի անագ վաճառողը ոսկու գնի մասին:

Ի տարբերություն այն բանաստեղծուհիների, ովքեր ստեղծագործելով նույն ժամանակաշրջանում, տուրք են տվել քարացած ձևերին՝ առանց արտահայտելու իրենց սեռի տարբերությունը, Միհրի Հաթունի ստեղծագործություններում տեղ-տեղ կարելի է հանդիպել որոշ անկեղծ արտահայտությունների, որոնք արտահայտում են կանացի զգացմունքայնություն:

REFLECTION OF GENDER CONTRADICTIONS IN DIVAN LITERATURE: NEJATI AND MIHRI HATUN

Mariam Melkonyan

(Summary)

This article examines the activity of female writers, their search for literature entry, the difficulties encountered along this way, and the gender contradictions between the writers reflected in their works, by the example of the nazires written by Mihri Hatun and the famous poet of the time Nejati.

ОТРАЖЕНИЕ ГЕНДЕРНЫХ ПРОТИВОРЕЧИЙ В ЛИТЕРАТУРЕ ДИВАН: НЕДЖАТИ И МИХРИ ХАТУН

Мариям Мелконян

(Резюме)

В этой статье рассматриваются деятельность писательниц, их поиск поступления в литературу, трудности, встречающиеся на этом пути, и отражение гендерных противоречий среди писателей в их произведениях на примере поэтессы Михри Хатун и известнейшего поэта того времени Неджати.